

ՄԽԻԹԱՐ ՍԵՖԱՍՏԱՅԻՆ ՈՐՊԷՍ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՅԹԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Մխիթարեան միաբանութեան երանաշնորհ հիմնադիր եւ առաջին աբբա՛այր Մխիթար Սեբաստացու կեանքն ու գործունէութիւնը բազում կենսագիրների եւ հայագէտների երկերում ուսումնասիրուել է ամենատարբեր տեսանկիւններից: Արդ, միաբանութեանս հիմնադրման 300-ամեայ յորելեանին նուիրուած այս կաճառային գիտաժողովը, որի նպատակը Մխիթարեանների դերի վերարծարծումն է հայ հոգեւոր-մշակութային վերանորոգութեան գործընթացում, պատեհ առիթ է գիտական հանրութեանը ներկայացնել Մխիթար աբբա՛օր կերպարը որպէս երաժիշտ եւս, հետեւաբար, նաեւ երաժշտական աւանդոյթի հիմնադիր Ս. Ղազար կղզու Մայրավանքում: Իսկոյն եւեթ հարկ է նշել, որ տուեալ դէպքում երաժիշտ ասելով պիտի պատկերացնել այն միջնադարեան իմաստով, որպէս նախ եւ առաջ հոգեւոր երգեցողութեան երաժշտապետ, այսինքն՝ հմուտ շարականագէտ եւ երգահան, տեսաբան եւ երգիչ միաժամանակ: Իր ուսումնառութեան շրջանում պատանի Մխիթարը կանոնաւոր երաժշտական կրթութիւն չի ստացել, սակայն իր ողջ կեանքը, կենսագիրների հաւաստմամբ, նա նուիրել է հոգեւոր երգերի, շարականների ու տաղերի իւրացմանը, իսկ այնուհետ սեփական նմոյշների յօրինմանն ու ուսուցմանը:

Մխիթար Սեբաստացին ծնուել է 1676 թուականին Սեբաստիայում: «Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ րաբունապետի եւ աբբայի» գրքում Հ. Ատեփանոս Ագոնցը գրում է, որ Մանուկը (սա Մխիթարի աւագանի անունն է, - Ա. Վ.) այնքան վաղ հասակում է որոշում նուիրուել հոգեւոր կեանքին, որ նրա ծնողները պարզապէս զարմանում են, սակայն եր-

բեք չեն ընդդիմանում իրենց զաւակի որոշմանը: Տասնամեայ Մանուկն իր նախնական կրթութիւնն ու երաժշտական առաջին տպաւորութիւններն արդէն ստացել էր երկու առաքինի կոյս քոյրերից, իսկ շարականների եղանակները սերտում էր Սեբաստիայի Սբ. Նշան եկեղեցում Յարութիւն անունով մի բարեպաշտ քահանայի աշակցութեամբ: Հէնց այս եկեղեցում էլ, 1691-ին, ընդամենը 15 տարեկանում, Անանիա եպիսկոպոսը նրան սարկաւագ է ձեռնադրում, տալով Մխիթար անունը, «առ ի լինելոյ Մխիթար բազմաց երկնակրօն վարուք, եւ լուսաւոր վարդապետութեամբ», - գրում է նոյն կենսագիրը: Պատանի Մխիթար սարկաւագին Աստուած բազմազան ձիրքեր էր պարգեւել, թերեւս դիւրացնելու համար նրա բացառիկ առաքելութեան ուղին, սակայն այդ ուղին լի էր բազում տատասկներով ու խոչընդոտներով:

Մխիթար Սեբաստացին իր կեանքն անմնացորդ կերպով նուիրել է նախախնամութեամբ իրեն վիճակուած առաքելութեան իրականացմանը: 1717 թուականից Վենետիկի Սբ. Ղազար կղզում իր իսկ գծագրերով կառուցելով վանք, եկեղեցի եւ օժանդակ այլ շինութիւններ, նա ընդամենը մէկ տասնեակ գործակիցների հետ հետեւողականօրէն ձեռնամուխ եղաւ այնպիսի դարակազմիկ գործունէութեան, որն իր հսկայական նշանակութիւնը չի կարող կորցնել երբեւէ: Իր կենսագիրների վկայութեամբ, երիտասարդ արբահայրը մանկուց աչքի էր ընկնում ոչ միայն երաժշտական նուրբ լսողութեամբ ու հազուադիւս յիշողութեամբ, այլեւ ախորժալուր երգչային ձայնով ու յանկարծաբանելու ցայտուն ձիրքով, ինչպէս նաեւ բանաստեղծական որոշակի շնորհքով: Ըստ Հ. Ստ. Ագոնցի, նա «գրէր եւ բազում բանս հոգեշահս, յօրինէր եւ երգս հոգեւորս ոտանաւոր չափմամբ. կազմեալ եւ քարոզս, երբեմն առ ի վարժութիւն անձին քարոզէր առանձինն ի սենեկի իւրում. ուր եւ ումանք ի վանականաց անտի գաղտ ի նմանէ ունկն եղեալ առ դրանն, սքանչանային ընդ բանս նորա. զի չէին թերեւս երբեք լուեալ զայնպիսի ինչ ի քարոզատու վարդապետաց»: Այս ամէնին զուգընթաց պատանի Մխիթարը չափազանց պարտաճանաչ ու աշխատասէր էր: Էջմիածնում ուսանելիս նրա հովանաւոր Միքայէլ արքեպիսկոպոսը, Մխիթարի բարեպաշտութիւնը չարաչահելով, նրան հասցրեց կուրուլթեան, որից սաստիկ վշտացած, նա զաղտնի գնաց Սեւանի վանք ճգնելու, որտեղ իր հաւատի ոյժը եւ Ս. Աստուածածնի

հանդէպ ունեցած պաշտամունքը ամոքում են Մխիթարին պատած կուրուլթիւնը: Իր 24 տաղերից մէկը Մխիթար Սեբաստացին յօրինել է հէնց այստեղ, Ս. Կոյս Մարիամի պատկերի առջեւ միայնակ աղօթելիս ունեցած հրաշալի տեսիլքից ոգեշնչուած: Այն կրում է «Երգ առ Երանուհի Կոյսն յօրինեալ բանիւք դրուատանօք եւ պէսպէս խնդրուածովք» խորագիրը եւ բաղկացած է երեք տնից, որի վերջին տողը «Լոյս տուր իմ ակին», վկայում է, որ այն մի իւրօրինակ աղերս է Աստուածամօրը: Այս տաղը յայտնի է որպէս «Անճառին խորան» սկզբնատողով հոգեպարար մի երգ, որը մէկն է Սեբաստացու այն 6 տաղերից, որոնց մեղեդիները, ի տարբերութիւն նրա ստեղծած այլ երգերի, պահպանուել եւ հասել են մինչեւ մեր օրերը:

«Բազմավէպի» 1977 թուականի յոբելեանական համարում (նուիրուած Մխիթար Աբբազօր ծննդեան 200-ամեակին), երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանի յօդուածից յետոյ զետեղուած է եզիպտահայ ճանաչուած երգահան Էդուարդ Յակոբեանի հակիրճ յաւելուածը, ուր վերջինս ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում վերոնշեալ ստեղծագործութեան մասին, այն է. «1930-ականներին, Գահիրէի մէջ, Անճառին խորան տաղը ձայնագրած է նաեւ հմուտ ձայնագրագէտ Մերկեր Մելիք, լսելով Մուրատ-Ռափայէլեան վարժարանի նախկին սան եզիպտահայ իրաւաբան եւ անուանի դաստիարակ Գարեգին Տիւրկէրեանէ, որ եղած է բանաստեղծ Դ. Վարուժանի դասընկերը նոյն կրթական հաստատութեան մէջ»: Այս տարբերակը ընդհանուր առմամբ նման է Հ. Ղեւոնդ Տայեանի ձայնագրածին, եւ Էդուարդ Յակոբեանը դաշնաւորելով այն ձայնի ու երգեհոնի համար, զետեղել է վերը նշուած ամսագրում, ձօնելով Մխիթար Աբբազօր խնկելի յոբելեանին: Սակայն գիտական տեսանկիւնից առաւել ուշագրաւ է այն փաստը, որ է. Յակոբեանն իր անձնական արխիւում յայտնաբերել ու հրապարակել է նաեւ նոյն այդ երգի մի այլ եղանակաւորումը, որ, իր կարծիքով, պատկանում է Նոր հայկական ձայնագրութեան հեղինակ Համբարձում Լիմոնճեանի գրչին, «որուն երաժշտական լեզուն կաղապարուած շարականի մեղեդիական տարազներուն վրայ, գերծ չէ քաղաքային երգային տարրերէ» (է. Յակոբեան - Ա. Վ.): Մնում է աւելացնել, որ նոյն տեղում տպագրուած է նաեւ Մխիթար Սեբաստացու թերեւս ամենահանրայայտ երգերից մէկի «Օրօրի» թահմիզեանական դաշնա-

ւորումը: Թէ՛ վերջինիս, թէ՛ Յակոբեանի դաշնաւորումները կատարուած են մասնազիտական բարձր մակարդակով եւ նուրբ ճաշակով: Սա նշանակում է, որ Մխիթար Սեբաստացու երգերը ցայժմ պահպանել են իրենց անանց հմայքը:

Մխիթար Աբբազօր երաժշտական գործունէութիւնը յաւուր պատշաճի ուսումնասիրութեամբ ընթերցողի սեղանին դրեց Վենետիկի Մխիթարեան միաբանութեան «սոխակը» Հ. Ղեւոնդ Տայեանը: 1954-ին լոյս տեսած «Մխիթար Աբբազայր երաժիշտ (իր շարադրած երգերով հանդերձ)» գրքի յաւելուածում նա գետեղել է վերը նշուած «Օրօրի» (կամ, աւելի ճշգրիտ, Երգ գորովագթական եւ դրուատական ի դիմաց Սրբուհայր Կուսին Մարիամու առ մանկացեալ Աստուածորդին իւր՝ «Ննջեա, որդեակ, քաղցր եւ անոյշ» սկզբնատողով) երեք աւանդական եղանակները հայկական գաւառներից գրառուած: Սա նշանակում է, որ Մխիթար Սեբաստացու երգերը դեռեւս ի դարի կէսերին լայն ժողովրդականութիւն էին վայելում Ս. Ղազար կղզու սահմաններից դուրս, հաւանաբար մերձաւոր սփիւռքի հայաբնակ վայրերում, եւ ժամանակի ընթացքում վերածուել էին ֆոլկլորի նմոյշների: Սրանով է բացատրուում մի շարք տարբերակների առկայութիւնը, որոնց մեղեդիները լիովին տարբերում են միմեանցից: Ի դէպ, պատահական չէ, որ Նիկողոս Թահմիզեանը դաշնաւորել է հէնց այս երգի երրորդ տարբերակը, որն ամէնից ինքնատիպն է, եւ որը Հ. Ղեւոնդ Տայեանը լսել էր ուղղակիօրէն Հ. Մինաս Նուրիխանից. «Ինծի աւանդողը կ'ըսէր, որ Հ. Մինաս Բժշկեան սորվեցուցեր է զայդ իր Տարիթա քրոջը, որուն աղջկանէն ալ ինքը (Հ. Նուրիխան) սորվեր է: Չորրորդ եղանակ մըն ալ կ'ըսուի, որ Պարսկաստանի մէջ կայ, եւ թէ այսօր ալ գործածութեան մէջ է: Հոսակ հինգերորդ մը շարադրուած տողերուս գրողէն կ'երգուի մերթ ընդ մերթ Ս. Ղազարու նորընծայացու պատանիներու կողմէ, Քրիստոսի Մենդեան եւ Յայտնութեան առթիւ կատարուած հովուերգական ներկայացումներուն ատեն», - գրում է Հ. Ղեւոնդ Տայեանը: Այս տեղեկութիւններն ուշագրաւ են ոչ միայն Մխիթար աբբազօր երաժշտական գործունէութեան հետազօտման տեսանկիւնից, այլեւ նրա արժանի յետնորդի՝ Հ. Ղեւոնդ Տայեանի երաժշտական ժառանգութեան ուսումնասիրութեան: Ափսոս, որ ընածին համեստութեան պատճառով վերջինս թերեւս աւելորդ է համարել հրապարակել նաեւ իրեն հասած կամ իր հեղինակած

եղանակը, բայց ես լիայոյս եմ, որ վերը նշուած կարեւոր տօներին այժմ էլ կատարոււմ է «Օրօրի» այդ տարբերակը, եւ գուցէ հնարաւոր է այն եւս զրառելով, յանձնել յետագայ սերունդներին հիացումին: Հ. Ղեւոնդ Տայեանն իր ուսումնասիրութեան վերջում տպագրել է Մխիթար Սեբաստացու տաղերից հինգը՝ Անտոնիոյ Զեչէի դաշնաւորութեան հանդերձ: Սրանց մեղեդիները Շնորհալու շնչով օծուն հոգեզմայլ ստեղծագործութիւններ են, որոնցից մէկը նուիրուած է սուրբ Անտոնիոսին, որը Միաբանութեան հովանաւորն ու պաշտպանն է համարոււմ աւանդաբար («Ըզբեզ սուրբ հայր Անտոնիէ» սկզբնատողով):

Մխիթար Աբբազօր միւս տաղերը, որոնց եղանակները պահպանուել են ցայժմ, Մարիամ Աստուածածնին նուիրուած ներբողներ են: Տարատեսակ փորձութիւններով լի իր կեանքում Մխիթար Սեբաստացին երբեք չի յուսահատուել եւ ամէն անգամ անհուն սիրով, յոյսով ու հաւատով իր բարեպաշտ հայեացքն ուղղել է աստուածային սուրբ ընտանիքին, եւ յատկապէս Ս. Աստուածամօրը: Եւ բնաւ պատահական չէ, որ 1700-ին կոստանդնուպոլսում հիմնելով իր միաբանութիւնը, այն հաստատող կնիքի վրայ ապագայ արքայայրը դրոշմում է 4 տառ՝ «Ո. Կ. Վ. Ա. որք են սկընատառք բառիցս Որդեգիր Կուսի Վարդապէս Ապաշխարութեան», - գրում է դարձեալ Հ. Ստ. Ագոնցը: Մխիթար Սեբաստացու հաւատամքն արտացոլող աւելի դիպուկ բանաձեւ անհնար էր մտայղանալ: Դառնալով Սեբաստացու տաղերին, Հ. Ղ. Տայեանի հաւաստմամբ, դրանք վերջինիս օրօք դեռեւս կատարուում էին Ս. Ղազարի Մայրավանքում եկեղեցական տարբեր տօների եւ արարողութիւնների ժամանակ: Դրանց հիմքում ընկած են չափածոյ ոտանաւորներ, բացառութեամբ «Երանուհի Մարիամ կոյս դրուատելի» երգից, որի բնագիրն արձակ կամ ազատ բանաստեղծութիւն է: Զեռնպահ մնալով այդ երգերից իւրաքանչիւրի մանրագնին վերլուծութիւնից, արժէ նշել միայն, որ «Գովեալ դասուց» սկզբնատողով երգը Մխիթար Սեբաստացու «Ամէնօրհնեալ սուրբ կոյս գլխաւ» ճարտարահիւս տաղի աքրոստիկոսի «գ» տառով սկսւող մի փոքրիկ հատուածն է, որն այժմ այդ հազարից աւելի տողերից բաղկացած «Երգաբանութիւն առ ամէնօրհնեալ կոյսն Մարիամ» վերնագրով կառուցիկ յորինուածքի միակ երգուող մասն է: Սա իր ելեւէջներով մօտ է ԱԶ ձայնեղանակի շարականներին սուլ դիեզի եւ սուլ բե-

կարի, ինչպէս նաեւ մի բեմուի ու մի բեկարի երանգային գեղեցիկ յաջորդումներով: Ինչ վերաբերում է Մխիթար Սեբաստացու 24 երգերի գրական բնագրերին, ապա դրանք լոյս են տեսել միայն նրա մահից (1749) տարիներ անց իր «Քրիստոնէական վարդապետութիւն» գրքի 3-րդ հրատարակութեանը կից: Այն կոչւում է «Տաղարան», սակայն ակնյայտ է, որ այնտեղ ամփոփուած բոլոր նմոյշների վերնագրերը սկսւում են «Երգ» բառով, իսկ վերջինը «Երգաբանութիւն»: Ի դէպ, սա տպագրուել է նաեւ 1772-ին՝ Մխիթար Սեբաստացու «Կրթութիւն աղօթից» գրքի յաւելուածով: Հ. Ղեւոնդ Տայեանն իրաւամբ գտնում է, որ ժամանակին վերոնշեալ բոլոր տաղերը երգուել են, ցաւով արձանագրելով դրանց մեծագոյն մասի եղանակների անդարձ կորուստը: Անդրադառնալով դրանց պահպանուած եղանակներին, հարկ է նկատել, որ Սեբաստացին յօրինել է հէնց երգեր, որոնք բիւրեղացել էին ղեռեւս Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւններում, որպէս շարականների շարքերից զատ մի ուրոյն երաժշտաբանաստեղծական տեսակ: Իրենց մեղմ ու հանդարտ ընթացքով, անպաճոյճ հիւստուածքով ու մատչելի բնոյթով սրանք անշուշտ առաւել ընկալելի էին ժողովրդին, քան միջնադարեան մեծակերտ զարդարական ոճի ճոխ եւ բարդ տաղերն ու մեղեդիները: Սա է պատճառը, որ Սեբաստացին դիմել է յատկապէս այս սեռին, ստեղծելով բոլորին մատչելի եւ սիրելի երգեր, որոնք են՝ «Գովեալ դասուց», «Անճառին խորան», «Աղաչեմ զքեզ», «Երանուհի» «Ըզքեզ սուրբ հայր», որոնք ձօնուած են Ս. Մարիամ Աստուածածնին, բացի վերջինից, որ նուիրուած է Ս. Հայր Անտոնին: Իսկ վեցերորդ երգը, ինչպէս վերը նշեցի, «Օրօրն» է, որը յայտնի է իր բազմաթիւ տարբերակներով:

Հակիրճ կերպով անդրադառնամ նաեւ Մխիթար Աբբահօր ստեղծած շարականներին, որոնք ամփոփուած են 3 կանոններում հետեւեալ խորագրերով՝ 1. Կանոն հրաշափառ տօնախմբութեան անուանն Յիսուսի, Կանոն հրաշափառ տօնախմբութեան անուանն ամէնօրհնեալ Կուսի Մարիամու, եւ 3. Կանոն սրբոյն Յովսեփայ Աստուածահօրն: Ըստ Հ. Ղեւոնդ Տայեանի, սրանցից առաջինը Ա. Ղազարի Մայրավանքում անխաթար կերպով երգւում էր վերջինիս օրօք, իսկ միւս երկուսն արդէն մէկ դարից աւելի է, որ Տօնացոյցում կատարուած հայկական ծէսի բարեփոխութիւնների հետեւանքով դուրս են եկել գործածութիւնից, եւ

բնականաբար դրանց եղանակները մոռացութեան են մատնուել: Մխիթար Սեբաստացին իր շարականներից ոչ բոլորի համար է սեփական մեղեդիներ յօրինել: Նրա գրչին պատկանող 3 կանոններում առկայ է շուրջ 15 միաւոր (չհաշուած Հարցերին կից Գործատները), որոնցից 11-ի դիմաց նշուած են Շնորհալու սիրուած շարականների եղանակները: Փաստօրէն Մխիթար Աբբահայրն այս դէպքում նոյնպէս հաւատարիմ է մնացել իր նախասիրութեանը, գերապատուութիւնը տալով յատկապէս Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւններին: Մնում է աւելացնել, որ խնդրոյ առարկայ շարականների բնագրերը նոյնպէս լոյս են տեսել Մխիթար Սեբաստացու «Գիրք Քրիստոնէական Վարդապետութեան» երկի երրորդ հրատարակութեան վերջում, «Տաղարանին» տպակից, առանց խախտելու հայոց միջնադարեան աւանդոյթը, այսինքն խազանչաներով հանդերձ: Սա ապացոյցն է այն հանգամանքի, որ Մխիթար արբահայրը մեծապէս կարեւորում էր խազերի նշանակութիւնը եւ հաւատարմօրէն հետեւում դարաւոր սովորոյթին:

Վերականգնանալով եկեղեցական ծէսն ու արարողութիւնը, Մխիթար Սեբաստացին իր նորաստեղծ միաբանութեան Մայրավանքում կարողացաւ նոր շունչ հաղորդել այնտեղ հնչող հոգեւոր երգեցողութեանը, պահպանելով հանդերձ մեր միջնադարեան լաւագոյն աւանդոյթները եւ դառնալով Միաբանութեան առաջին երաժշտապետը: Ունենալով Ուսուցչի աստուածատուր ունակութիւն, Աբբահայրն իր առաջին հետեւորդների եւ սաների մէջ ներարկեց հայեցի երգեցողութեան այն անսպառ աւելին, որն ահա արդէն երեք հարիւրամեակ է, ինչ յարատեւում է: Այս առումով խիստ յատկանշական է այն, որ Ի դարի կէսերին եւրոպական ձայնանիշերով գրառելով եւ լոյս ընծայելով Սբ. Ղազարի Մայրավանքում հնչող շարականների տեղային տարբերակները, ահա թէ ինչ է գրում երանաշնորհ Հ. Ղեւոնդ Տայեանը այդ ձայնագրեալ շարակնոցի Դ. հատորի սկզբում. «Ազդ. ընդ առաջ երթալով շատերու փափաքին՝ առանց նկատելու հատորներու շարքի կանոնաւոր յաջորդութիւն մը կը սկսինք նախ հրատարակել Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ Հատոր Դ. Իրաւացի էր այս փափաքը, որովհետեւ ասոր պարունակութիւնը Սուրբ Ղազարու աւանդութեամբ 1) Մխիթար Աբբահօր վերագրուած՝ եղանակներ ըլլալէ զատ, (նոյնը հասկնալ

նաեւ ամէն հատորի երգերուն համար),...» եւ այլն: Սրանով Հ. Ղեւոնդ Տայեանը հաւաստում է, որ Մխիթար Սեբաստացին իրաւամբ համարուում է Մխիթարեան միաբանութեան (առնուազն Վենետիկի Սբ. Ղազարի Մայրավանքում) հոգեւոր երգեցողութեան հայեցի աւանդույթի հիմնադիրը:

Այս երեք հարիւրամեակի ընթացքում եկեղեցական ծէսն ու երգեցողութիւնն ինչպիսի մասնակի փոփոխութիւններ էլ որ կրած լինեն, այնուամենայնիւ հիմնական սկզբունքներով ու երաժշտա-կատարողական ճաշակով դրանք մնում են Մխիթարեան՝ այս բառի բուն իմաստով: Շարականերգութիւնը, որ հոգեւոր արարողութեան անբաժան ու կարեւորագոյն բաղկացուցիչն է, Սբ. Ղազարի Մայրավանքում այնպիսի հաստատուն հիմք ունի, որ վստահօրէն կարելի է որակել այն որպէս հայ հոգեւոր երգեցողութեան Վենետիկի դպրոց, որն էջմիածնի եւ Կոնստանդնուպոլսի դպրոցների շարքում իր պատուաւոր տեղն ու դերն ունի: Եւ վերոնշեալ ձայնագրեալ շարակնոցը, որ առաջին անգամ եւրոպական ձայնանիշերով աշխատասիրել է Մխիթար Սեբաստացու արժանաւոր յետնորդներից մէկը՝ Հ. Ղեւոնդ Տայեանը, երախտիքի լաւագոյն տուրքը դարձաւ Մխիթար Աբբազօր երաժշտական մեծարժէք վաստակին:

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ